ՏԵՂԵԿԱՆՔ

«Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների հիմնարկների եվ անհատ ձեռնարկատերերի հաշվառման մասին» օրենքում փոփոխվող հոդվածների վերաբերյալ

«ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ, ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔ

Հոդված 67. Սույն օրենքի պահանջները խախտելու համար պատասխանատվությունը

1. Գործակալություն ներկայացված փաստաթղթերի տվյալների իսկության համար պատասխանատվությունը կրում են այդ փաստաթղթերը ներկայացրած անձինք:

2. Գործակալության ղեկավարը և աշխատակիցները պատասխանատվություն են կրում պետական գրանցումն ու պետական հաշվառումն անհիմն մերժելու, դրանց կատարումից խուսափելու կամ պետական գրանցումն ու պետական հաշվառումն անհիմն կամ անօրինական կատարելու համար՝ օրենքով սահմանված կարգով:

Հոդված 67[1] Փաստաբանական հարցումները

1. Գործակալությունը պարտավոր է պատասխանել փաստաբանի կողմից ներկայացված հարցմանը:

2. Գործակալությունը պարտավոր է փաստաբանական հարցումը մուտքագրվելու պահից տասնօրյա ժամկետում հարցումը կատարող փաստաբանին տրամադրել պահանջվող փաստաթղթերը (տեղեկությունները) կամ դրանց պատճենները, եթե դրանք վերաբերում են քաղաքացիական կացության ակտերի գրացման մարմնի իրավասությանը և չեն պարունակում օրենքով պահպանվող գաղտնիք:

3. Գործակալության կողմից փաստաբանական հարցմանը մերժելու հիմք չի կարող լինել փաստաբանի՝ տեղեկատվության հայցման շահագրգիռ անձ չլինելը: